



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարան,  
նախագահող դատավոր՝ Ս.Համբարձումյան  
դատավորներ՝ Ա.Բեկթաշյան  
Տ.Սահակյան

10 հունվարի 2025 թվական

ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝  
մասնակցությամբ դատավորներ՝

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ  
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ  
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Հայկ Արթուրի  
Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի  
հունիսի 9-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանի  
վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2020 թվականի փետրվարի 26-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի  
վարչության Կենտրոնական բաժնում հարուցվել է թիվ 13190220 քրեական գործը՝

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգիրք) 235-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի մարտի 6-ի որոշմամբ Հայկ Արթուրի Պետրոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով:

Նախաքննության մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ Հ.Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2020 թվականի մարտի 11-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հունվարի 26-ի դատավճռով ճանաչվել ու հռչակվել է Հ.Պետրոսյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքում՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով: Հ.Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված՝ չհեռանալու մասին ստորագրությունը, վերացվել է:

3. Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2022 թվականի հունիսի 9-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հունվարի 26-ի դատավճիռն անփոփոխ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 24-ի որոշմամբ ընդունվել է վարույթ<sup>1</sup>, և 2024 թվականի հուլիսի 24-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

### **Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

<sup>1</sup> Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող՝ 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

5. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

5.1. Այսպես, բողոքաբերը փաստարկել է, որ Հ.Պետրոսյանը մեղադրվում է ոչ թե ապօրինի կերպով կոփագենք կրելու, այլ «Զենքի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի «գ» կետով նախատեսված՝ հարվածող-փշրող, սառը զենք հանդիսացող, ինքնաշեն եղանակով պատրաստված՝ կոփագենքի նմանողությամբ մոխրագույն մետաղյա առարկա ապօրինի կերպով կրելու համար, իսկ այդ առարկայի՝ սառը զենքի ենթատեսակ հանդիսանալու հանգամանքը հաստատված է փորձագետի եզրակացությամբ, որը որպես ապացույց օգտագործելու թույլատրելիության վերաբերյալ ստորադաս դատարանների եզրահանգումը հիմնավոր չէ: Վերոշարադրյալ փաստարկը բողոքաբերը հիմնավորել է նրանով, որ փորձագետը համապատասխան եզրակացությունը կազմելիս որպես աղբյուր օգտագործել է ոչ միայն Ռուսաստանի Դաշնության ստանդարտը, այլև «Զենքի մասին» ՀՀ օրենքն ու վերաբերելի գրականություն: Բողոքաբերը փաստել է, որ հիշյալ օրենքով հստակեցված են սառը զենքի բնութագրիչ հատկությունները, որոնց հաշվառմամբ և հատուկ գիտական մեթոդիկայի կիրառմամբ՝ փորձագետն իրականացրել է փորձաքննություն՝ եզրահանգելով, որ անձնական խուզարկությամբ Հ.Պետրոսյանից վերցված առարկան հարվածող-փշրող սառը զենք է:

Նշվածը բողոքաբերը փոխկապակցել է փորձագետի ցուցմունքի հետ, ըստ որի՝ առանց Ռուսաստանի Դաշնության ստանդարտի ևս հնարավոր է առաջադրվող հարցի պարզաբանումը, քանզի ներկայացված առարկայի՝ սառը զենք լինելու հանգամանքի պարզման համար բավարար են օգտագործված գիտական տվյալներն ու վերը նշված օրենքը: Այս ենթատեքստում բողոքի հեղինակը նշել է, որ անձնական խուզարկությամբ Հ.Պետրոսյանից վերցված առարկայի՝ կոփագենք լինելու փաստը հաստատող ստանդարտի բացակայությունը մեղսագրված արարքում նրա մեղավորության հարցում չի կարող առաջացնել որևէ իրավական հետևանք:

6. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի հունիսի 9-ի որոշումը, ամբաստանյալ Հ.Պետրոսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով, և նրա

նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

**Վճռարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

7. Հ.Պետրոսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրվում է այն արարքի համար, որ նա. «(...) 2020 թվականի փետրվարի 19-ին՝ Երևան քաղաքի «Օղակաձև» գրոսայգու 6-րդ հարվածի՝ «Գրիգոր Լուսավորիչ» եկեղեցու մոտ, փաթափի հեղուկ ձախ գրպանում ապօրինի կերպով կրել է հարվածող-փշրող սառը զենք հանդիսացող՝ ինքնաշեն եղանակով՝ կոփազենքի նմանողությամբ պարրասարված մոխրագույն մետաղյա առարկա, որը նրա մոտ հայտնաբերվել է նույն օրը ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում կատարված անձնական խուզարկության ժամանակ»<sup>2</sup>:

8. Թիվ 393-20 փորձագիտական եզրակացության համաձայն՝ «(...) Ելնելով հետազոտվող առարկայի ընդհանուր տեսքից, չափային և կառուցվածքային առանձնահատկություններից, նաև տեղեկատու գրականության տվյալների հետ համեմատությունից, կարելի է գալ եզրակացության այն մասին, որ ներկայացվածը պարրասարված է ինքնաշեն եղանակով կոփազենքերի (կասպեյների) նմանողությամբ: Կոփազենքի ապահովվածության և անվտանգության սարիճանները սրուգելու նպատակով համապատասխան թիրախի վրա կատարվեցին փորձարարական հարվածներ (5-20), որի արդյունքում պարզվեց, որ կոփազենքի կառուցվածքային հատկանիշներն ապահովում են նրա հաստատուն կերպով ձեռքում պահելը, փարբեր ուժգնությամբ և ուղղությամբ հարվածներ հասցնելու անվտանգությունը, ուստի այն պիտանի է առանց ձեռքը վնասելու նշանակել խոցելու համար և հանդիսանում է հարվածող-փշրող սառը զենք, որի շրջանառությունը համաձայն ՀՀ «Զենքի մասին օրենքի» 6-րդ հոդվածի՝ ՀՀ տարածքում արգելված է»<sup>3</sup>:

<sup>2</sup> Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 43-47:

<sup>3</sup> Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 11:

Փորձագիտական եզրակացությունում որպես օգտագործված տեղեկատվության աղբյուրներ նշվել են. «1. «Холодное оружие» под общей редакцией А.И.Устинова, М.Э.Портнова, Ю.А.Нацваладзе, Москва 1994г.

2. «Զենքի մասին» ՀՀ օրենք,

3. ГОСТ Р 51215-98 «Оружие холодное термины и определения»<sup>4</sup>:

8.1. Փորձագետ Վ.Ռոստոմյանի ցուցմունքի համաձայն՝ հետազոտության ընթացքում օգտագործվել և կիրառվել են գիտական տվյալներ ու որոշակի մեթոդիկա, մասնավորապես, գրականությամբ նշված է, որ կոփազենքը սառը զենք է, դրան բնութագրական է «հարվածող-փշրող» հատկություն, բացի այդ, ներկայացված են նաև կոփազենքի արտաքին հատկանիշները: Վերոգրյալից բացի, հատուկ գիտական մեթոդիկայի կիրառմամբ՝ ներկայացված առարկայով կատարվել են փորձարարական հարվածներ<sup>5</sup>:

9. Մեղադրական եզրակացության հիմքում դրված փորձագիտական եզրակացությունն Առաջին ատյանի դատարանը ճանաչել է անթույլատրելի ապացույց՝ հետևյալ պատճառաբանությամբ. «(...) [Մ]տանդարտը, որի հիման վրա կատարվել է փորձարկումները և որոշվել է համապատասխան առարկայի սառը զենք լինելը, հասանելի եղանակով պաշտոնական որևէ աղբյուրում հրապարակված չէ, այդ ստանդարտը կարելի է գտնել միայն համացանցային տիրույթում առկա կայքէջերում, այն դեպքում, երբ [Առաջին ատյանի դատարանի համար պարզ չէ, թե այդ կայքերը պաշտոնական են, թե ոչ, որպիսի պայմաններում չի երաշխավորվում դրանց համապատասխանությունը բնօրինակին և առաջացնում է ողջամիտ կասկած դրանցով սահմանված՝ կոփազենքի բնութագրիչ հատկանիշների արժանահավատության վերաբերյալ:

Ընդ որում, հարկ է նաև ընդգծել, որ այդ կանոններն ի սկզբանե կազմված են ռուսերենով, իսկ դրանց հայերեն թարգմանված օրինակը հասանելի չէ որևէ աղբյուրում: Ավելին՝ ԳՕՍ Ռ 51215-98 «Սառը զենք. Տերմիններ և սահմանումներ» Ռուսաստանի Դաշնության ստանդարտը ՀՀ պաշտոնական տեղեկագրերում հրապարակված չէ, հերևարար՝ չի գործում, որպիսի պայմաններում դրա հիման վրա կատարված դատարարական գործողության արժանահավատությունը ողջամտորեն

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>5</sup> Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 132-145:

կասկածի փակ է հայտնվում օրինականության սկզբունքի հնարավոր պահպանված չլինելու փաստակյունից:

Այլ կերպ ասած՝ ԳՕՍՏ Ռ 51215-98 «Ստոր զենք. Տերմիններ և սահմանումներ» Ռուսաստանի Դաշնության սրանդարերը չի բավարարում «հասանելիության» և «կանխարեւելիության» չափանիշներին, հետևաբար չի կարող համարվել «օրենք», քանի որ չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին: Եման պայմաններում հիշյալ սրանդարերը հնարավոր չէ կիրառել Հայկ Պետրոսյանի կողմից հայտնաբերված առարկայի՝ կոփազենք հանդիսանալու հանգամանքը որոշելիս: Այլ կերպ՝ այդ սրանդարերում սահմանված բնութագրիչ հարկանիշները, ինչպես նաև առարկան կոփազենք ճանաչելու վերաբերյալ նկարագրված մեթոդիկան չեն կարող համարվել իրավական հիմք՝ Հայկ Պետրոսյանի անձնական խուզարկությամբ հայտնաբերված առարկան կոփազենք ճանաչելու համար:

Բացի այդ, (...) «Ջենքի մասին» ՀՀ օրենքի ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսդիրը, սահմանելով քաղաքացիական և ծառայողական զենքի շրջանառության վրա փարածվող սահմանափակումները, նախարեւել է համապատասխան չափանիշներ, որոնք հստակորեն սահմանում են բնութագրիչ հարկանիշներ կամ թվարկում են ուղղորդող հանգամանքներ, որոնց առկայության պարզումը նախապայման է այս կամ այն առարկան շրջանառությունն արգելված զենքի փաստակների ցանկում ներառելու համար: (...) [Ո]րոշակի առարկաների դեպքում դրանց շրջանառության արգելքի մասին փեղեկություններ սրանալու համար պետք է ուսումնասիրել իրավասու այլ մարմինների կողմից սահմանված չափանիշները, սրանդարերը և այլն:

Մինչդեռ, ի փարբերություն դանակների, էլեկտրահարող սարքերի և կայծային պարպիչների, գազային զենքի, հրազենի, ինչպես նաև օրենքում թվարկված զենքի այլ փաստակների համար չափանիշներ նախարեւելված լինելուն, հայտնաբերված առարկայի՝ կոփազենք հանդիսանալու հանգամանքը պարզելու համար օրենսդիրը չի սահմանել բնութագրիչ հարկանիշներ, ինչպես նաև հղում չի փվել այնպիսի ակերի կամ սրանդարների, որոնցում կարող են պարունակվել ուղղորդող փվյալներ կամ բնութագրումներ, որոնք պետք է հաշվի առնվեն համապատասխան

առարկան կոփազենք համարելու հարցը քննարկելիս (փորձաքննություն իրականացնելիս):

Այսպիսով՝ [Առաջին արյանի դիտարարանը գալիս է այն եզրահանգման, որ Հայկ Պետրոսյանի արարքում բացակայում է հանցակազմը, քանի որ ՀՀ ներպետական իրավական համակարգում բացակայում են հասարարված այն սրանդարները, որոնց հիման վրա հնարավոր է հասարարված համարել հայրնաբերված առարկայի՝ կոփազենք լինելու փաստը: Հակառակ մոտեցումը խիստ կասկածելի է և նման հետևությունը հիմնված կլինի բացառապես ենթադրության վրա»<sup>6</sup>:

10. Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով վիճարկվող դատական ակտը, արձանագրել է. «(...) Առաջին արյանի դիտարարանը հիմնավորված կերպով եկել է այն եզրահանգման, որ Հայկ Պետրոսյանի արարքում բացակայում է հանցակազմը, քանի որ ՀՀ ներպետական իրավական համակարգում բացակայում են հասարարված այն սրանդարները, որոնց հիման վրա հնարավոր է հասարարված համարել հայրնաբերված առարկայի՝ կոփազենք լինելու փաստը: Հակառակ մոտեցումը խիստ կասկածելի է և նման հետևությունը հիմնված կլինի բացառապես ենթադրության վրա»<sup>7</sup>:

### **Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.**

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Հ.Պետրոսյանին ներկայացված մեղադրանքի հիմքում դրված փորձագետի թիվ 393-20 եզրակացությունն անթույլատրելի ապացույց ճանաչելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունը:

12. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք) 243-րդ հոդվածի համաձայն՝ «Փորձաքննությունը կատարվում է հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի որոշման հիման վրա, երբ քրեական գործով նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի, այդ թվում՝ համապատասխան

<sup>6</sup> Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 132-145:

<sup>7</sup> Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 35-51:

հետազոտությունների մեթոդիկայի, բնագավառներում հայրուկ գիտելիքներ: Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, մասնագետների, ընթերականների հայրուկ գիտելիքների առկայությունը չի ազարում համապարասխան դեպքերում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունից»:

Նույն օրենսգրքի 250-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Փորձագետի եզրակացության մեջ պետք է նշված լինի՝ երբ, որտեղ, ում կողմից (անուն, ազգանուն, հայրանուն, կրթությունը, մասնագիտությունը, մասնագիտական աշխատանքային ստաժը, գիտական աստիճանը և կոչումը, զբաղեցրած պաշտոնը) և ինչի հիման վրա է կատարվել փորձաքննությունը, ովքեր են մասնակցել, քրեական գործի որ նյութերն է փորձագետն օգտագործել, ինչպիսի իրեղեն սպացույցներ, նմուշներ և այլ օբյեկտներ են հետազոտվել, ինչպիսի հետազոտություններ են կատարվել, ինչպիսի մեթոդներ են կիրառվել, առաջադրված հարցերի հիմնավորված պարասխանները, գործի համար նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք պարզվել են փորձագետի նախաձեռնությամբ»:

12.1. Տվյալ քրեադատավարական նորմի ձևակերպումից հետևում է, որ փորձաքննությունը սերտորեն կապված է ապացուցման գործընթացի, այն է՝ վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքներ հաստատելու կամ հերքելու նպատակով ապացույցներ հավաքելու հետ, որն իրականացվում է հատուկ գիտելիքների կիրառմամբ՝ փորձագիտական եզրակացություն տալու միջոցով, և որը որոշակի պահանջների բավարարման դեպքում ճանաչվում է որպես թույլատրելի ապացույց և դրվում դատավարական ակտի հիմքում:

Փորձաքննության արդյունք հանդիսացող փորձագիտական եզրակացությունը՝ որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, գնահատում է վարույթն իրականացնող մարմինը՝ առաջնորդվելով ապացույցների գնահատման ընդհանուր կանոններով և հաշվի առնելով ապացույցի այս տեսակի առանձնահատկությունները: Վճռաբեկ դատարանը, ապացույցի այս տեսակի գնահատման կապակցությամբ արձանագրել է, որ փորձագետի եզրակացությունն ապացույցների տեսակներից մեկն է, ու որպես



այդպիսին չունի նախապես հաստատված ապացույցի ուժ, իսկ դրա գնահատման նկատմամբ կիրառելի են ապացույցների գնահատման ընդհանուր կանոնները<sup>8</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքը ևս ճանաչում է գիտականորեն հիմնավորված փորձագիտական եզրակացությունները որպես ապացույց օգտագործելու հնարավորությունը, ինչը դիտարկվում է արդար դատաքննության իրավունքի սահմաններում<sup>9</sup>:

13. Վերոշարադրյալից բխում է, որ ինչպես ցանկացած ապացույց, այնպես էլ փորձագետի եզրակացությունը ենթակա է գնահատման թույլատրելիության, վերաբերելիության ու արժանահավատության տեսանկյունից՝ հաշվի առնելով ապացույցի այս տեսակի առանձնահատկությունները:

13.1. Ապացույցի վերոնշյալ հատկանիշների առնչությամբ Վճռաբեկ դատարանը *Արարար Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «Ապացույցների թույլատրելիության հասկանիշը վերաբերում է դրանց ձևական կողմին: Դրա էությունը կազմում է ապացույցները ձեռք բերելիս օրենքով նախատեսված դատավարական պահանջների պահպանվածությունը և ենթադրում է.

- աղբյուրի օրինականություն՝ ապացույցը պետք է ձեռք բերվի միայն օրենքով սահմանված աղբյուրներից (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մաս),

- ձեռքբերման միջոցների օրինականություն՝ պետք է պահպանված լինեն ապացույցների ձեռքբերմանն ուղղված գործողություններ կատարելուն օրենքով առաջադրված պահանջները,

- դատավարական ձևակերպում՝ ապացույցը, դրա ձեռքբերման գործընթացը պետք է օրենքով սահմանված կարգով ենթարկվեն դատավարական ձևակերպման,

- լիազորված սուբյեկտ՝ այն պետք է սրացված լինի ապացույց ձեռք բերելու լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից:

<sup>8</sup> Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Արայիկ Խաչատրյանի* գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԿԴ1/0006/01/14 որոշման 16-րդ կետը:

<sup>9</sup> Տե՛ս, *inter alia*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bönisch v. Austria* գործով 1985 թվականի մայիսի 6-ի վճիռը, գանգատ թիվ 8658/79 և *Brandstetter v. Austria* գործով 1991 թվականի օգոստոսի 28-ի վճիռը, գանգատներ թիվ 11170/84, 12876/87 և 13468/87:

*Ապացույցն անթույլատրելի ճանաչելու հիմքերը հարակ սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածով»<sup>10</sup>:*

13.2. Վերոշարադրյալ դիրքորոշման հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ փորձագետի եզրակացության թույլատրելիությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել փորձաքննություն նշանակելու և կատարելու դատավարական կարգը պահպանված լինելը, փորձագետի եզրակացությունը կազմելու ճշտությունը և դրա մեջ օրենքով նախատեսված բոլոր ռեկվիզիտների առկայությունը, հետազոտության ներկայացված օբյեկտների ձեռքբերման և պահպանման դատավարական կարգը պահպանված լինելը:

14. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ.

- անձնական խուզարկությամբ Հ.Պետրոսյանից վերցված առարկայի՝ սառը զենք լինելու հանգամանքը պարզելու համար նշանակվել է դատատեխնիկական փորձաքննություն<sup>11</sup>,

- պարզելու համար, թե արդյոք անձնական խուզարկությամբ Հ.Պետրոսյանից վերցված առարկան հանդիսանում է սառը զենք՝ այդ թվում դրա տեսակը, փորձագետը ներկայացված առարկայի արտաքին հատկանիշները համադրել է տեղեկատու գրականության տվյալների հետ և հատուկ գիտական մեթոդիկայի կիրառմամբ կատարել է փորձարարական հարվածներ: Արդյունքում փորձագետն արձանագրել է, որ կատարված փորձարարական հարվածների արդյունքում պարզվել է, որ կռփազենքի կառուցվածքային հատկանիշներն ապահովում են նրա հաստատուն կերպով ձեռքում պահելը, տարբեր ուժգնությամբ և ուղղությամբ հարվածներ հասցնելու անվտանգությունը, ուստի այն պիտանի է առանց ձեռքը վնասելու նշանակետ խոցելու համար և հանդիսանում է հարվածող-փշրող սառը զենք, որի շրջանառությունը, համաձայն «Զենքի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, ՀՀ տարածքում արգելված է: Փորձագիտական եզրակացությամբ մատնանշված աղբյուրները, որոնք օգտագործվել են հետազոտությունը կատարելիս, ներառում են

<sup>10</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արարատր Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 31.1-րդ կետը:

<sup>11</sup> Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 9:

«Զենքի մասին» ՀՀ օրենքը, Ռուսաստանի Դաշնության ստանդարտն ու տեղեկատու գրականություն<sup>12</sup>,

- Հ.Պետրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրանք է առաջադրվել հարվածող-փշրող, սառը զենք հանդիսացող, ինքնաշեն եղանակով՝ կոփազենքի նմանողությամբ պատրաստված, մոխրագույն մետաղյա առարկա ապօրինի կերպով կրելու համար<sup>13</sup>,

- որպես Հ.Պետրոսյանին ներկայացված մեղադրանքի հիմքում դրված՝ թիվ 393-20 փորձագիտական եզրակացությունն անթույլատրելի ապացույց ճանաչելու հիմնավորում՝ Առաջին ատյանի դատարանը նշել է, որ փորձագետի օգտագործած՝ Ռուսաստանի Դաշնության ստանդարտը չի կարող համարվել «օրենք», քանի որ այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, հետևաբար չի կարող կիրառվել անձնական խուզարկությամբ Հ.Պետրոսյանից վերցված առարկայի՝ սառը զենք լինելու հանգամանքը պարզելու համար: Դատարանի պնդմամբ՝ ինչ վերաբերում է «Զենքի մասին» ՀՀ օրենքին, ապա դրանով ներկայացված չեն այն բնութագրիչ հատկանիշները, և այն ակտերը կամ ստանդարտները, որոնք պետք է հաշվի առնվեն համապատասխան առարկան կոփազենք համարելու հարցը քննարկելիս: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ ներպետական իրավական համակարգում բացակայում են հաստատված այն ստանդարտները, որոնց հիման վրա հնարավոր է ապացուցված համարել անձնական խուզարկությամբ Հ.Պետրոսյանից վերցված առարկայի՝ կոփազենք լինելու փաստը<sup>14</sup>,

- Վերաքննիչ դատարանը, մերժելով դատախազի վերաքննիչ բողոքը, ըստ էության համաձայնել է Առաջին ատյանի դատարանի պատճառաբանություններին<sup>15</sup>:

15. Սույն որոշման 12-13.2-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով փորձագետի եզրակացության՝ անթույլատրելի ապացույց ճանաչելու եզրահանգման հիմքում դրված ստորադաս դատարանների փաստարկին առ այն, թե ներպետական իրավական համակարգում

<sup>12</sup> Տե՛ս սույն որոշման 8-րդ և 8.1-րդ կետերը:

<sup>13</sup> Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

<sup>14</sup> Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

<sup>15</sup> Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

բացակայում են այն ստանդարտները, որոնցով պետք է գնահատել անձնական խուզարկությանը Հ.Պետրոսյանից վերցված առարկայի՝ կոփազենք լինելու հանգամանքը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում պատշաճ իրավական գնահատական չի ստացել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցակազմը: Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասը, ի թիվս այլնի, պատասխանատվություն է նախատեսում ապօրինի կերպով **սառը զենք** կրելու համար, ինչից հետևում է, որ քրեաիրավական որակման տեսանկյունից որոշիչ է առարկայի՝ սառը զենք լինելու հանգամանքը, բայց ոչ երբեք դրա տեսակը: Ուստի, Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքարկերի այն դատողությունը, որ ամբաստանյալ Հ.Պետրոսյանի արարքում հանցակազմի առկայությունը դատարանի կողմից պետք է քննարկման առարկա դարձվի ու գնահատվի ոչ թե ապօրինի կերպով «կոփազենք» կրելու, այլ ապօրինի կերպով **սառը զենք հանդիսացող**, կոփազենքի նմանությամբ մետաղական **առարկա** կրելու շրջանակներում: Հետևաբար, ընդունելի չէ ստորադաս դատարանների այն մոտեցումը, ըստ որի՝ անձնական խուզարկությանը Հ.Պետրոսյանից վերցված առարկան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցագործության առարկա հանդիսանալու հանգամանքի պարզումը կապված է կոփազենքի բնութագրիչ հատկանիշները սահմանող որոշակի ստանդարտի կամ օրենքի առկայության հետ:

15.1. Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ վերոնշյալ նորմը բլանկետային է, ուստի այն պետք է դիտարկել «Զենքի մասին» ՀՀ օրենքի՝ սառը զենքի հասկացությունը բացահայտող դրույթների հետ համակցության մեջ:

Այսպես, Հ.Պետրոսյանին վերագրվող արարքի կատարման պահին գործող «Զենքի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի «գ» կետով սառը զենքը բնութագրվում է որպես *«[Մ]արդու մկանային ուժի օգնությամբ, օբյեկտի հետ անմիջական շփման ժամանակ այն խոցելու համար նախատեսված զենք»*: Ընդ որում, կենդանի կամ այլ նշանակետ խոցելու՝ սառը զենքի հատկանիշը պահպանվել է նաև 2022 թվականի հոկտեմբերի 5-ին ընդունված և 2023 թվականի հունիսի 1-ին ուժի մեջ մտած «Զենքի շրջանառության կարգավորման» մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում, որն այն բնորոշում է որպես կտրող, ծակող, ջարդող սարք, որը նախատեսված է մարդու մկանային ուժի օգնությամբ անմիջական շփման դեպքում

կենդանի կամ այլ նշանակետ խոցելու և վնասազերծելու համար: Վերոշարադրյալից հետևում է, որ սատը զենքի բնութագրիչ հատկանիշները հստակ օրենսդրական կարգավորում ունեն: Այլ հարց է, որ այդ բնութագրիչ հատկանիշների առկայությունը պարզելու համար անհրաժեշտ են համապատասխան ոլորտի հատուկ գիտելիքներ:

15.2. Սույն գործի փաստական հանգամանքներից բխում է, որ կոնկրետ դեպքում նշանակված դատատեխնիական փորձաքննության ընթացքում՝ պարզելու համար անձնական խուզարկությամբ Հ.Պետրոսյանից վերցված առարկայի՝ սատը զենք լինելու հանգամանքը, ինչպես նաև դրա տեսակը, փորձագետը ներկայացված առարկայի արտաքին հատկանիշները համադրել է տեղեկատու գրականության տվյալների հետ և հատուկ գիտական մեթոդի կիրառմամբ կատարել է փորձարարական հարվածներ, որի արդյունքում եզրահանգել է, որ այն պիտանի է առանց ձեռքը վնասելու նշանակետ խոցելու համար և հանդիսանում է հարվածող-փշրող սատը զենք: Այսինքն՝ ներկայացված առարկայի՝ սատը զենք լինելու հանգամանքը որոշելու համար փորձագետն օգտվել է գիտական աղբյուրներից ու կիրառել է համապատասխան բնագավառի հատուկ մեթոդիկա:

15.3. Վերոգրյալի հետ մեկտեղ, իրավաչափ համարելով ստորադաս դատարանների եզրահանգումն առ այն, որ փորձաքննության կատարման ընթացքում օգտագործված Ռուսաստանի Դաշնության ստանդարտը չի կարող համարվել «օրենք», քանի որ այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին<sup>16</sup>, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ հիշյալ ստանդարտը սույն գործով կիրառվել է ոչ թե որպես հանցակազմը սահմանող օրենսդրական ակտ, այլ փորձագետի կողմից օգտագործվել է **որպես տեղեկատու գրականություն**, հետևապես նշված ստանդարտի օգտագործումը չի ենթադրում փորձաքննության կատարման կարգի այնպիսի էական խախտում, որը կբացառեր փորձագետի եզրակացությունը որպես թույլատրելի ապացույց օգտագործելու հնարավորությունը:

16. Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հ.Պետրոսյանին ներկայացված մեղադրանքի հիմքում դրված փորձագետի թիվ 393-

<sup>16</sup> Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հասմիկ Գրիգորյանի և Էդուարդ Սարիբեկյանի գործով 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵՇԳ/0131/01/15 որոշումը:

20 եզրակացությունն անթույլատրելի ապացույց ճանաչելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունը հիմնավոր չէ:

17. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, թիվ 393-20 փորձագիտական եզրակացությունն անթույլատրելի ապացույց ճանաչելիս, թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ, 127-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հունվարի 26-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի հունիսի 9-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ նոր քննության:

Նոր քննության ընթացքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը պետք է սույն գործում առկա ապացույցների, այդ թվում՝ թիվ 393-20 փորձագիտական եզրակացության, համակցությամբ որոշի ներկայացված մեղադրանքում Հ.Պետրոսյանի մեղավորության կամ անմեղության հարցը՝ հանգելով համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ ու 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Հայկ Արթուրի Պետրոսյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի հունվարի 26-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի

հունիսի 9-ի որոշումը բեկանել ու գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ նոր քննության:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ \_\_\_\_\_ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ \_\_\_\_\_ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

\_\_\_\_\_ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

\_\_\_\_\_ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

\_\_\_\_\_ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ